Մալարիան, կողատապը, բծաւոր տիֆոն եկել են մեզ այցելութեան:

Քառասուն աստիճան ջերմը զառանցում է մոմէ դէմք առած միւս հիւանդների մօտ:

Ես եւ Սաթօն դիշերները քուն չունենք: Ցուրտ է եւ անձրեւ: Վառարան չկայ, փայտ չկայ, դեղօրայքը սուղ են:

Դժոխային այդ մթնոլորտի մէջ պէտք է նաեւ աշխատել. դասախօսութիւն պատրաստել, յօդուած գրել, փայտի վրայ նկարներ փորագրել:

Հաց, թէյ:

Թէյ, հաց:

Ու ահա —

«Երաժշտական Ստուդիայի վարչութիւնը աչքի առաջ ունենալով որ ձեզ փոխ տրուած երկու երկաթէ մահճակալները պատկանում են բանուորա-գիւղացիական իշխանութեան, պահանջում է անմիջապէս նրանց վերադարձնել, հակառակ պարագային Ստուդիայի վարչութիւնը պիտի դիմի Ժողովրդական Դատարանին»:

Անիծեա՜լ երկիր...

* * *

Փետրուար.—

Անձրեւ, ցեխ:

Բանտի մէջ: Գիշերը ուրուականների մղձաւանջային այցելութիւնը, ցորեկը խորտակուած սրտերի կատարին խարխռող աչքերի վեհերոտ նայուածքները: Կաթկթող տանիքների տակ կուչ եկած քաղաքի աննչան եւ ստորին կեանքը: Մլուկի ցեղ միջակութիւնը, աղբ եւ թշուառութիւն:

Ու ջրակոյտերի վրայից ցատկելով համալսարանի ճանապարհը: Դասախօսների թթուած եւ անձկութեամբ լեցուն դէմքերը, ուսանողների յոգնաբեկ աչքերի արտայայտութիւնը: Մի երկու ժամ խարուսիկ ոգեւորութիւն Ս. Աւգուստինոսի, Տերտուղիանոսի կամ Դանտէի շուրջը: Եւ կուրացած քաղաքի խաւար ձեռքից բռնած, մինչեւ ծունկ ցեխի մէջ ընկնելով, տխուր ու տրտում վերադարձ:

Կորուած ենք նաեւ արտաքին աշխարհից: Ի՞նչ է կատարւում մեր սահմաններից դուրս՝ ոչ ոք չի իմանում: Ականջէ ականջ լուրեր են պտտում՝ մեծցած, չափազանցուած: Տեղական թերթերը ոչ ոք չի կարդում, որովհետեւ ոչ ոք չի հաւատում, եւ եթէ կարդում են՝ հակառակն են մտածում:

Այսօր դասախօսութեան ժամանակ ինձ վատ զգացի:

Համալսարանի բժիշկներ՝ քննութիւն: Սիրտ: Հիւծուածութեան առաջին նշանները: «Սնունդի պակաս, ծուխ, չափազանց շատ աշխատանք, յուզումներ»:

Պէտք է մեկնիլ:

Հե՜շտ է ասել պէտք է մեկնիլ: Տակնուվերայութիւն, անցագրի անիծեալ հարցը, փող:

Փո՛ղ:

* * *

— ...

Նոր թուղթ Լուսաւորութեան Կոմիսարիատից:

«Անմիջապէս վերադարձնել նախկին Ձեր բնակարանի մէջ գտնուած դաշնամուրը, որը ըստ գրաման օրէնքին պետութեան սեփականութիւնն է կազմում»:

Դիմումներ, բողոք:

«Զլինի՛ որ տաս, Լուսժողկոմը իր նոր եկած սիրուհու համար է ուզում»:

Մերժում եմ:

* * *

Մարտ.—

Իմ բացակայութեան ժամանակ զինուած միլիցիականները նորից ներս են խուժել բնակարանս եւ, Լուսժողկոմ Մուսաեանի հրամանով, սպառնացել են կանանց եւ երախաներին ու բռնի դաշնամուրը տարել են:

* * *

— ... Համալսարանում ժողով ժողովի վրայ: Կոմբջիջի աղջիկները, բարձրագոյն ոբոչմամբ, իմ եւ նախկին նախարար մի դասախօսի դէմ գործ են սկսել:

Մեզանից անբաւական են: Մեր դասախօսութիւնները մարքսիստական բնոյթ չեն կրում, Ֆրանսերէնի մէջ էլ անուշադիր եմ:

Աղմուկ, բողոք, յուզում:

Հուլ են տալիս: Ուզում են անօթի թողնել:

« Ես Ձեզ ասացի Պոլսում, որ կեանքը